



ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ Cbonds Armenia Corporate

Հայաստանի կորպորատիվ պարտատոմսերի շուկայի ինդեքսներ
Cbonds Armenia Corporate

Armenia Corporate
Bond Index

Armenia Liquid
Bond Index

Armenia Financial
Bond Index

Armenia Real
Sector Bond Index



Բովանդակություն

Ինդեքսի հաշվարկման բանաձևը.....	3
Լրացուցիչ ցուցանիշների հաշվարկ	4
Ինդեքսային ցուցակի ձևավորման մեթոդաբանություն	5
Կորպորատիվ պարտատոմսերի ինդեքսներ Armenia Corporate Bond Index (ARMCB)	5
Կորպորատիվ պարտատոմսերի ինդեքսներ Armenia Liquid Bond Index (ARMLQ)	6
Կորպորատիվ պարտատոմսերի ինդեքսներ Armenia Financial Bond AMD Index (ARMFI)...	7
Կորպորատիվ պարտատոմսերի ինդեքսներ Real Sector Bond Index (ARMRE)	8
Ինդեքսային ցուցակների վերանայում	9
Հավելված 1: Ինդեքսային ցուցակների չափանիշների համառոտ աղյուսակ	10

Ինդեքսի հաշվարկման բանաձևը

Cbonds.ru ընկերության կողմից առաջարկվող պարտատոմսերի ինդեքսները հանդիսանում են ամբողջական եկամտաբերության ինդեքսներ (total return index) և հաշվարկվում են հետևյալ բանաձևով:

$$I_0 = 100 \quad I_t = I_{t-1} \frac{\sum_{i=1}^n [P_{i,t} + HK\mathcal{D}_{i,t} + G_{i,t}] N_{i,t}}{\sum_{i=1}^n [P_{i,t-1} + HK\mathcal{D}_{i,t-1}] N_{i,t}}$$

որտեղ՝

n - ինդեքսային ցուցակում ներառված թողարկումների քանակը;

$P_{i,t}$ - i -րդ թողարկման գինը t պահին (մաքուր գին, դրամական արտահայտությամբ);

$HK\mathcal{D}_{i,t}$ - i -րդ թողարկման կուտակված կուպոնային եկամուտը t պահին (կուպոնի վճարման օրը, որը միաժամանակ հանդիսանում է նոր կուպոնային շրջանի սկիզբ, տվյալ ցուցանիշը հավասար է զրոյի);

$G_{i,t}$ - i -րդ թողարկման նկատմամբ t պահին ստացվող կուպոնային վճարումները և/կամ ամորտիզացիոն վճարումները ($G_{i,t}$ ցուցանիշը զրոյից տարբեր է միայն կուպոնի վճարման և/կամ ամորտիզացիոն մարման ամսաթվին, երբ այն հավասար է համապատասխան կուպոնային վճարմանը և/կամ ամորտիզացիոն վճարմանը);

$N_{i,t}$ - ինդեքսային ցուցակում ընդգրկված i -րդ պարտատոմսերի թողարկման ծավալը (հատերով) t պահին՝ ճշգրտված թողարկողի և ոլորտի կշիռներով.

Փաստացիորեն բանաձևի թվարարում ներկայացված արտահայտությունը հանդիսանում է ինդեքսային ցուցակում ներառված թողարկումների կապիտալիզացիան t պահին, իսկ հայտարարում ներկայացված արտահայտությունը՝ կապիտալիզացիան $t-1$ պահին.

Ինդեքսը հաշվարկվում է յուրաքանչյուր առևտրային օրվա փակման պահին, իսկ հրապարակվում է հաջորդ օրվա սկզբին.

Բացի հիմնական ինդեքսից հաշվարկվում է նաև օժանդակ («կոնյուկտուրային») ինդեքս, որը հանդիսանում է գնային ինդեքս և հաշվարկվում է հետևյալ կերպ:

$$IP_0 = 100 \quad IP_t = IP_{t-1} \frac{\sum_{i=1}^n P_{i,t} N_{i,t}}{\sum_{i=1}^n P_{i,t-1} N_{i,t}}$$

Նշումները համապատասխանում են վերևում ներկայացվածներին.

Լրացուցիչ ցուցանիշների հաշվարկ

Բացի ամբողջական եկամտաբերության ինդեքսներից և գնային ինդեքսից, հաշվարկվում են նաև ցուցանիշներ, որոնք բնութագրում են ինդեքսային պորտֆելի միջին կշռված եկամտաբերությունը և տևողությունը.

Հաշվարկվում է

- «պարզ» միջին կշռված եկամտաբերությունը (առանց տարվա ընթացքում կուպոնների վերաներդրման հաշվառման), և
- «արդյունավետ» միջին կշռված եկամտաբերությունը (հաշվի է առնում տարվա ընթացքում կուպոնների վերաներդրումը):

Միջին կշռված տևողությունը ներկայացնում է պորտֆելի տևողությունն միջինացված արժեքը, իսկ կշռումը կատարվում է յուրաքանչյուր արժեթղթի ընդհանուր կապիտալիզացիայի մեջ ունեցած մասնաբաժնի հիման վրա:

Եթե թողարկման համար հաշվարկված են և՛ մարման տևողությունը, և՛ օֆերտային դյուրացիան, ապա ինդեքսային պորտֆելի միջին կշռված տևողությունն հաշվարկում օգտագործվում է օֆերտային դյուրացիայի ցուցանիշը:

$$D_p = \frac{\sum_i D_{i,p} [P_{i,t} + ACI_{i,t}] N_{i,t}}{\sum_i [P_{i,t} + ACI_{i,t}] N_{i,t}}$$

որտեղ:

D_p - պորտֆելի տևողություն;

$D_{i,p}$ - i-րդ թողարկման տևողությունը t պահին.

Միջին կշռված եկամտաբերությունները ներկայացնում են ինդեքսային պորտֆելում ներառված արժեթղթերի կշռված եկամտաբերությունը: Կշռավորումը կատարվում է՝ հաշվի առնելով թղթի բաժինը շուկայական կապիտալիզացմամբ և տևողությամբ:

Եթե թողարկման համար հաշվարկված են և՛ մարման եկամտաբերությունը, և՛ օֆերտային եկամտաբերությունը, ապա ինդեքսային պորտֆելի միջին կշռված եկամտաբերության հաշվարկում օգտագործվում է օֆերտային եկամտաբերության ցուցանիշը

$$Y_p^* = \frac{\sum_i Y_{i,t}^* D_{i,t} [P_{i,t} + ACI_{i,t}] N_{i,t}}{\sum_i D_{i,t} [P_{i,t} + ACI_{i,t}] N_{i,t}}$$

որտեղ:

$Y_{i,t}^*$ – պորտֆելի միջին կշռված եկամտաբերությունը (արդյունավետ);

$Y_{i,t}^*$ i-րդ թողարկման եկամտաբերությունը t պահին (արդյունավետ).

Կուտակված կուպոնային եկամտի (ԼԿԴ), եկամտաբերության և դյուրացիայի հաշվարկման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է հաշվիչի տեղեկագրերում.



Ինդեքսային ցուցակի ձևավորման մեթոդաբանություն

Կորպորատիվ պարտատոմսերի ինդեքսներ Armenia Corporate Bond Index (ARMCB)

Armenia Corporate Bond AMD Index (ARMCB AMD)

Armenia Corporate Bond USD Index (ARMCB USD)

Արժեթղթերի ընտրություն:

1. Ինդեքսի հաշվարկի համար սկզբնական փուլում դիտարկվում են հայկական թողարկողների կորպորատիվ պարտատոմսերը, որոնք ընդունված են առևտրի Հայաստանի ֆոնդային բորսայում: Բացառվում են սեկյուրիտիզացված արժեթղթերը, կառուցվածքային պրոդուկտները, ինչպես նաև դեֆոլտային թողարկողների արժեթղթերը:
2. Ինդեքսներում ներառման համար դիտարկվում են զրոկուպոնային և/կամ կուպոնային պարտատոմսեր ֆիքսված կուպոնային տոկոսադրույքով, որոնք ունեն սահմանված վերջնական մարման ժամկետ:
3. 2-րդ կետով ձևավորված թողարկումների ամբողջությունից՝
 - Armenia Corporate Bond AMD Index (ARMCB AMD) ինդեքսների շարքի համար բացառվում են այն արժեթղթերը, որոնց թողարկման արժույթը տարբերվում է AMD-ից;
 - Armenia Corporate Bond USD Index (ARMCB USD) ինդեքսների շարքի համար բացառվում են այն արժեթղթերը, որոնց թողարկման արժույթը տարբերվում է USD-ից;
4. Բացառվում են այն պարտատոմսերը, որոնց մինչև մարման ժամկետը (կամ մոտակա օֆերտայի, «put» կամ «call» տարբերակի իրականացումը) կազմում է 182 օրից պակաս՝ ինդեքսային ցուցակի գործողության մեկնարկի ամսաթվից հաշվարկված:
5. Բացառվում են այն արժեթղթերը, որոնց համար նախորդ ամսվա ընթացքում Cbonds կայքում առկա գնանշումների օրերի քանակը պակաս է 5-ից:
6. Վերը նշված 1-5 կետերի կիրառման արդյունքում յուրաքանչյուր ինդեքսի համար ստացված ցուցակները կոչվում են «Ինդեքսային ցուցակներ»:
7. Սույն մեթոդաբանությանը համապատասխան ցուցակի վերանայումը, ինչպես նաև նոր թողարկումների ներառումը, իրականացվում է Cbonds ընկերության կողմից ամսական մեկ անգամ:
8. Ինդեքսները հաշվարկվում են ամեն օր, այն ամսաթվերին, երբ ինդեքսային պորտֆելի արժեթղթերի առնվազն 50%-ի համար թարմացված են գնանշումները:



Կորպորատիվ պարտատոմսերի ինդեքսներ Armenia Liquid Bond Index (ARMLQ)

Armenia Liquid Bond AMD Index (ARMLQ AMD)

Armenia Liquid Bond USD Index (ARMLQ USD)

Արժեթղթերի ընտրություն:

1. Արժեթղթերի ընտրությունը իրականացվում է հայկական թողարկողների կորպորատիվ պարտատոմսերից, որոնք ընդունված են առևտրի Հայաստանի ֆոնդային բորսայում: Բացառվում են սեկյուրիտիզացված արժեթղթերը, կառուցվածքային պրոդուկտները, ինչպես նաև դեֆոլտային թողարկողների արժեթղթերը:
2. Ինդեքսներում ներառման համար դիտարկվում են զրոկուպոնային և/կամ կուպոնային պարտատոմսեր ֆիքսված կուպոնային տոկոսադրույքով, որոնք ունեն սահմանված վերջնական մարման ժամկետ:
3. 2-րդ կետով ձևավորված թողարկումների ամբողջությունից՝
 - Armenia Liquid Bond AMD Index (ARMLQ AMD) ինդեքսների շարքի համար բացառվում են այն արժեթղթերը, որոնց թողարկման արժույթը տարբերվում է AMD-ից;
 - Armenia Liquid Bond USD Index (ARMLQ USD) ինդեքսների շարքի համար բացառվում են այն արժեթղթերը, որոնց թողարկման արժույթը տարբերվում է USD-ից;
4. Բացառվում են այն պարտատոմսերը, որոնց մինչև մարման ժամկետը (կամ մոտակա օֆերտայի, «put» կամ «call» տարբերակի իրականացումը) կազմում է 182 օրից պակաս՝ ինդեքսային ցուցակի գործողության մեկնարկի ամսաթվից հաշվարկված:
5. Բացառվում են այն արժեթղթերը, որոնց համար նախորդ եռամսյակի ընթացքում Cbonds կայքում առկա գնանշումների օրերի քանակը պակաս է 30-ից:
6. Արժեթղթերի նկատմամբ կիրառվում է նաև լիկվիդայնության լրացուցիչ չափանիշ, որը հիմնված է առևտրի շրջանառության վրա: Հաշվարկվում է պարտատոմսերի առևտրի շրջանառության միջնարժեքը նախորդ եռամսյակի համար այն թողարկումների շրջանակում, որոնք բավարարում են 1-5 կետերի պայմաններին:
7. Ինդեքսային ցուցակում ներառվում են այն պարտատոմսերը, որոնց շրջանառությունը դիտարկվող ժամանակահատվածում գերազանցում է միջնարժեքը, որը հաշվարկված է 6-րդ կետի համաձայն:
8. Այն պարտատոմսերի համար, որոնք նախորդ եռամսյակում արդեն ընդգրկված էին ինդեքսային ցուցակում, կիրառվում է մեղմացված լիկվիդայնության չափանիշ: Այդպիսի արժեթղթերը պահպանվում են ինդեքսային ցուցակում, եթե դրանց շրջանառությունը գերազանցում է միջնարժեքի 50%-ը, որը հաշվարկված է 6-րդ կետի համաձայն:
9. Վերը նշված 1-8 կետերի կիրառման արդյունքում յուրաքանչյուր ինդեքսի համար ստացված ցուցակները կոչվում են «Ինդեքսային ցուցակներ»:
10. Սույն մեթոդաբանությանը համապատասխան ցուցակի վերանայումը, ինչպես նաև նոր թողարկումների ներառումը, իրականացվում է Cbonds ընկերության կողմից եռամսյակային պարբերականությամբ:
11. Ինդեքսները հաշվարկվում են ամեն օր, այն ամսաթվերին, երբ ինդեքսային պորտֆելի արժեթղթերի առնվազն 50%-ի համար թարմացված են գնանշումները:



Կորպորատիվ պարտատոմսերի ինդեքսներ Armenia Financial Bond AMD Index (ARMFI)

Armenia Financial Bond AMD Index (ARMFI AMD)

Armenia Financial Bond USD Index (ARMFI USD)

Արժեթղթերի ընտրություն:

1. Արժեթղթերի ընտրությունը իրականացվում է հայկական թողարկողների կորպորատիվ պարտատոմսերից, որոնք ընդունված են առևտրի Հայաստանի ֆոնդային բորսայում: Բացառվում են սեկյուրիտիզացված արժեթղթերը, կառուցվածքային պրոդուկտները, ինչպես նաև դեֆոլտային թողարկողների արժեթղթերը:
2. Ինդեքսներում ներառման համար դիտարկվում են զրոկուպոնային և/կամ կուպոնային պարտատոմսեր ֆիքսված կուպոնային տոկոսադրույքով, որոնք ունեն սահմանված վերջնական մարման ժամկետ և պատկանում են տնտեսության ֆինանսական ոլորտին (ներառյալ ապահովագրությունը, բանկային ոլորտը և միկրոֆինանսավորումը):
3. 2-րդ կետով ձևավորված թողարկումների ամբողջությունից՝
 - Armenia Financial Bond AMD Index (ARMFI AMD) ինդեքսների շարքի համար բացառվում են այն արժեթղթերը, որոնց թողարկման արժույթը տարբերվում է AMD-ից;
 - Armenia Financial Bond USD Index (ARMFI USD) ինդեքսների շարքի համար բացառվում են այն արժեթղթերը, որոնց թողարկման արժույթը տարբերվում է USD-ից;
4. Բացառվում են այն պարտատոմսերը, որոնց մինչև մարման ժամկետը (կամ մոտակա օֆերտայի, «put» կամ «call» տարբերակի իրականացումը) կազմում է 182 օրից պակաս՝ ինդեքսային ցուցակի գործողության մեկնարկի ամսաթվից հաշվարկված:
5. Բացառվում են այն արժեթղթերը, որոնց համար նախորդ ամսվա ընթացքում Cbonds կայքում առկա գնանշումների օրերի քանակը պակաս է 5-ից:
6. Վերը նշված 1-5 կետերի կիրառման արդյունքում յուրաքանչյուր ինդեքսի համար ստացված ցուցակները կոչվում են «Ինդեքսային ցուցակներ»:
7. Սույն մեթոդաբանությանը համապատասխան ցուցակի վերանայումը, ինչպես նաև նոր թողարկումների ներառումը, իրականացվում է Cbonds ընկերության կողմից ամսական մեկ անգամ:
8. Ինդեքսները հաշվարկվում են ամեն օր, այն ամսաթվերին, երբ ինդեքսային պորտֆելի արժեթղթերի առնվազն 50%-ի համար թարմացված են գնանշումները:



Կորպորատիվ պարտատոմսերի ինդեքսներ Real Sector Bond Index (ARMRE)

Armenia Real Sector Bond AMD Index (ARMRE AMD)

Armenia Real Sector Bond USD Index (ARMRE USD)

Արժեթղթերի ընտրություն:

1. Արժեթղթերի ընտրությունը իրականացվում է հայկական թողարկողների կորպորատիվ պարտատոմսերից, որոնք ընդունված են առևտրի Հայաստանի ֆոնդային բորսայում: Բացառվում են սեկյուրիտիզացված արժեթղթերը, կառուցվածքային պրոդուկտները, ինչպես նաև դեֆոլտային թողարկողների արժեթղթերը:
2. Ինդեքսներում ներառման համար դիտարկվում են գրուկուպոնային և/կամ կուպոնային պարտատոմսեր ֆիքսված կուպոնային տոկոսադրույքով, որոնք ունեն սահմանված վերջնական մարման ժամկետ և թողարկված են տնտեսության ոչ ֆինանսական հատվածի թողարկողների կողմից:
3. 2-րդ կետով ձևավորված թողարկումների ամբողջությունից`
 - Armenia Real Sector Bond AMD Index (ARMRE AMD) ինդեքսների շարքի համար բացառվում են այն արժեթղթերը, որոնց թողարկման արժույթը տարբերվում է AMD-ից;
 - Armenia Real Sector Bond USD Index (ARMRE USD) ինդեքսների շարքի համար բացառվում են այն արժեթղթերը, որոնց թողարկման արժույթը տարբերվում է USD-ից;
4. Բացառվում են այն պարտատոմսերը, որոնց մինչև մարման ժամկետը (կամ մոտակա օֆերտայի, «put» կամ «call» տարբերակի իրականացումը) կազմում է 182 օրից պակաս` ինդեքսային ցուցակի գործողության մեկնարկի ամսաթվից հաշվարկված:
5. Բացառվում են այն արժեթղթերը, որոնց համար նախորդ ամսվա ընթացքում Cbonds կայքում առկա գնանշումների օրերի քանակը պակաս է 5-ից:
6. Վերը նշված 1-5 կետերի կիրառման արդյունքում յուրաքանչյուր ինդեքսի համար ստացված ցուցակները կոչվում են «Ինդեքսային ցուցակներ»:
7. Սույն մեթոդաբանությանը համապատասխան ցուցակի վերանայումը, ինչպես նաև նոր թողարկումների ներառումը, իրականացվում է Cbonds ընկերության կողմից ամսական մեկ անգամ:
8. Ինդեքսները հաշվարկվում են ամեն օր, այն ամսաթվերին, երբ ինդեքսային պորտֆելի արժեթղթերի առնվազն 50%-ի համար թարմացված են գնանշումները:



Ինդեքսային ցուցակների վերանայում

Հաշվի առնելով հաշվարկման մեթոդաբանությունը՝ ինդեքսային ցուցակների վերանայումը իրականացվում է հետևյալ դեպքերում:

Պլանային վերանայում:

- Ամսական՝ յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը (Armenia Liquid Bond Index (ARMLQ) ինդեքսի համար՝ եռամսյակային պարբերականությամբ)։

Արտապլանային վերանայում:

- Ինդեքսային ցանկում ընդգրկված մեկ կամ մի քանի թողարկումների համար շուկայականից դուրս գնային զգալի տատանումների կայունացումից հետո առաջին աշխատանքային օրը;
- Ինդեքսի կոմիտեի որոշմամբ, բացառիկ հանգամանքների դեպքում, որոնք պահանջում են ինդեքսի կազմի վերանայում:
- Եթե թողարկողը կատարել է տեխնիկական խափանում, նրա թողարկումները չեն հեռացվի ինդեքսների ցանկից մինչև հաջորդ վերանայումը: Եթե տեխնիկական խափանումը ստացել է «խափանման» կարգավիճակ, այդ թողարկողի բոլոր թողարկումները կհեռացվեն բոլոր ինդեքսների ցանկերից խափանման պաշտոնական հայտարարությունից հետո հաջորդ աշխատանքային օրը:

Հավելված 1: Ինդեքսային ցուցակների չափանիշների համառոտ աղյուսակ

Ինդեքսի անվանում	Ենթաշրջան	Երկիր	Արժեթղթերի տեսակ	Սեզմենտ	Արժույթ	Շրջանառության նվազագույն ժամկետ (օր)	Ինդեքսի հաշվարկման մեկնարկի ամսաթիվ	Նախորդ ժամանակահատվածում առևտրային օրերի նվազագույն քանակ	Տնտեսության ոլորտ
Armenia Corporate Bond AMD Index (ARMCB AMD)	ԱՊՀ	Հայաստան	պարտատոմսեր	կորպորատիվ	AMD	182	03.01.2022	5	Բոլոր ոլորտները
Armenia Corporate Bond USD Index (ARMCB USD)	ԱՊՀ	Հայաստան	պարտատոմսեր	կորպորատիվ	USD	182	03.01.2022	5	Բոլոր ոլորտները
Armenia Liquid Bond AMD Index (ARMLQ AMD)	ԱՊՀ	Հայաստան	պարտատոմսեր	կորպորատիվ	AMD	182	03.01.2022	30	Բոլոր ոլորտները
Armenia Liquid Bond USD Index (ARMLQ USD)	ԱՊՀ	Հայաստան	պարտատոմսեր	կորպորատիվ	USD	182	03.01.2022	30	Բոլոր ոլորտները
Armenia Financial Bond AMD Index (ARMTI AMD)	ԱՊՀ	Հայաստան	պարտատոմսեր	կորպորատիվ	AMD	182	03.01.2025	5	Ֆինանսական ոլորտ (ներառյալ ապահովագրությունը, բանկային ոլորտը և միկրոֆինանսավորումը)
Armenia Financial Bond USD Index (ARMTI USD)	ԱՊՀ	Հայաստան	պարտատոմսեր	կորպորատիվ	USD	182	03.01.2025	5	Ֆինանսական ոլորտ (ներառյալ ապահովագրությունը, բանկային ոլորտը և միկրոֆինանսավորումը)
Armenia Real Sector Bond AMD Index (ARMRE AMD)	ԱՊՀ	Հայաստան	պարտատոմսեր	կորպորատիվ	AMD	182	03.01.2025	5	Ոչ ֆինանսական ոլորտ
Armenia Real Sector Bond USD Index (ARMRE USD)	ԱՊՀ	Հայաստան	պարտատոմսեր	կորպորատիվ	USD	182	03.01.2025	5	Ոչ ֆինանսական ոլորտ